Գիտություն

ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ
№ 7-8
(260-261)
2013 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ 70-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԱՌԱՆՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԻ ՀԱՐՑԵՐԻՑ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱԽՇՈՒՄԱՐՅԱՆԸ

- Պարոն Բախշումարյան, Ձեր գիտակցական կյանքը, ավելի քան 60 տարին, անցել է գիտությունների ազգային ակադեմիայում, որը շուտով տոնելու է հիմնադրման 70-ամյա հոբելյանը: Ի՞նչ մտորումներ են Ձեզ համակում տոնի նախօրյակին:

- Հայտնի է, որ հայ ժողովուրդը տակավին հնագույն ժամանակներից հատուկ սեր ունի գիտության, առհասարակ լուսավորության նկատմամբ: Պատմության քառուղիներում նա իր այդ ունակությունները շռայլորեն դրսևորել է՝ ստեղծելով մնայուն արժեքներ, համաշխարհային քաղաքակրթությունը հարստացրել անկրկնելի գաղձերով: Սակայն նաև, որ գիտությունը համակարգող բարձրագույն հաստատություն ունենալու հարցը մշտապես մտահոգել է մեր ժողովրդի մեծերին: Սակայն միայն Հայրենական մեծ պատերազմի օրերին՝ 1943 թ., իրականացավ այդ ձգտումը. հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի ստեղծումով հանրապետությունում նոր թափ ստացավ գիտության զարգացումը, ձևավորվեցին և արդյունավետ սկսեցին գործել գիտության ժամանակակից նոր ճյուղեր: Ի պատիվ մեզ, կարճ ժամանակում Հայաստանի ակադեմիան հայտնի դարձավ որպես Խորհրդային Միության լավագույն գիտական կենտրոններից մեկը: Ավելին, Հայաստանի գիտության կամառը միջազգային լայն ճանաչման արժանացավ:

Անկախություն ձեռք բերելուց հետո և՛ Հայաստանում, և՛ մյուս հանրապետություններում, մի շարք հայտնի պատճառներով, գիտությունը և ամբողջ մշակույթը նահանջ ապրեցին, կորցրեցին իրենց առաջնային դիրքերը:

Կարծում եմ, ԳԱԱ-ի առաջիկա հոբելյանը լավագույն առիթն է, որը հնարավորություն է ընձեռում բարձրաձայնելու, թե հայ գիտությունը ինչպիսի վիթխարի ձեռքբերումներ է ունեցել անցած յոթ տասնամյակներում, և թե մենք ինչ մարտահրավերների առաջ ենք կանգնած այսօր: Եվ երկրորդ, որը խիստ կարևորում եմ, հասարակության ամենալայն շերտերին պետք է հասցնել այն իրողությունը, որ Հայաստանը միշտ էլ եղել է գիտական բարձր վարկանիշ ունեցող երկիր և այսօր էլ մնում է այդպիսին: Առանց գիտության ոչ մի երկիր ու ժողովուրդ ոչ միայն չեն կարող առաջադիմել, այլև գոյատևել:

- Ի՞նչ առանձնահատկություններ կառանձնացնեք հայ պատմագիտության խորհրդային տարիների և նորանկախ Հայաստանի համար:

- Անտարակույս, պատմության հիմնախնդիրները միայն սոցիալ-դասակարգային աշխարհայացքով դիտարկելու խորհրդային ժամանակաշրջանում իշխող գաղափարախոսությունը կաշկանդում, որոշ պարագաներում ուղղակի խեղաթյուրում էր պատմական երևույթների ճշմարտացի լուսաբանումը: Որպես կանոն ուսումնասիրությունների ոլորտից դուրս էին թողնվում ազգային բնույթի բազում հարցեր, ինչպես ասենք ազգային-ազատագրական շարժումների, ազգային կուսակցությունների, եկեղեցու պատմությունը և այլն: Դրան հակառակ, փաստերն անտեսելով վարդագույն էին ներկայացվում կոմունիստական կուսակցության, հեղափոխական շարժումների, խորհրդային իշխանության օրոք կյանքի կոչված երևույթները: Պատմաբանները, մասնավորապես նոր և նորագույն շրջանները զբաղվողները, աշխատում էին կաշկանդված գաղափարական սխալներ թույլ չտալու մտավախության մթնոլորտում:

Այդ ամենով հանդերձ, հարկ է նշել, որ իր ամբողջության մեջ խորհրդահայ պատմագիտությունը լուրջ հաջողություններ ունեցավ: Սակայն անցման շրջանում, հատկապես անկախության առաջին տարիներին, լայն շարժում սկսվեց խորհրդահայ պատմական գիտությունը ուղղակի ոչնչացնելու, այն կեղծիքների, խեղաթյուրումների ասպարեզ դիտելու ուղղությամբ: Ես հանդես եկա այդ ծայրահեղությունների դեմ (տես ՊԲՀ, 1990, N 4):

Անկախությունը լիակատար ազատություն բերեց: Գիտաշխատողը անկաշկանդ ստեղծագործելու լիիրավ ազատություն և հնարավորություն ստացավ: Ուշադրությունը բևեռվեց արգելված ազգային պատմության թեմաների վրա: Հրապարակ եկան նորովի շարադրված ծանրակշիռ շատ ուսումնասիրություններ: Սակայն դրա հետ մեկտեղ նվազեց հրատարակվող աշխատությունների ճկատմամբ պահանջկոտությունը, պատմության հարցերով սկսեցին զբաղվել նաև մասնագիտական պատրաստվածություն չունեցող սիրողները: Հրատարակված գրքերի նախկինում ընդունված լրջմիտ քննարկումների փոխարինելու եկան շռնրհանդեսները: Բարձրակարգ ուսումնասիրությունների կողքին հրապարակ եկան ցածրորակ, ճիշտ կլիներ ասել՝ ընթերցողի հոգուն ու մտքին ոչինչ չտվող անորակ բազմաբնույթ ու բազմաքանակ խզբզանքները: Կորսվեցին աշխատությունների գնահատման չափանիշները: Խիստ նվազեց գրքի նկատմամբ հետաքրքրությունը: Ուրիշ խոսքով ասած, սահմանչ չճանաչող ազատությունը դուռ բացեց նաև ոչ համակարգված, խստորեն ասված՝ խառնակ իրավիճակի:

- Պարոն Բարխուդարյան, ավելի քան 20 տարի աշխատելով ԳԱԱ նախագահությունում որպես ակադեմիկոս-քարտուղար, փոխպրեզիդենտ, հումանիտար բաժանմունքի ղեկավար, ամփոփականորեն շփվել, հարաբերվել եք ակադեմիայի երեք պրեզիդենտների՝ Վիկտոր Համբարձումյանի, Ֆաղդեյ Սարգսյանի և Ռաֆիկ Մարտիրոսյանի հետ:Ինչպե՞ս կբնութագրեք նրանց գործունեությունը:

- 1990 թ., երբ ինձ առաջարկվեց ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, մտադիր էի հրաժարվել: Երկար տարիների գիտակազմակերպական գործունեությունը հնարավորություն չէր տվել լիարժեք գիտական աշխատանքով զբաղվելու և ցանկանում էի այդ բացը լրացնել: Արվեստի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Ջարյանը կշտամբեց և խորհուրդ տվեց համաձայնել, նշելով, որ հենց միայն Վիկտոր Համբարձումյանի հետ աշխատելը արդեն մեծ պատեհություն է:

Ակադեմիկոս-քարտուղարի պարտականություններին ծանոթանալիս պրեզիդենտ Համբարձումյանը այն հանձարդ համարեց բանակի շտաբի պետի պաշտոնին և հավելեց, որ մենք ավելի հաճախ ենք հանդիպելու: Եվ այդպես էլ եղավ:

Իրավ է, որ Համբարձումյանն իր հզոր տաղանդով կարողանում էր ճիշտ ուղենշել գիտության ամենատարբեր ճյուղերի զարգացման հեռանկարները: Նրա նախաձեռնությամբ հիմնվեցին գիտական նոր օջախներ, Մոսկվայից հրավիրվեցին արժանավոր մասնագետներ: Արտակարգ ուշադիր էր երիտասարդության նկատմամբ, որքան էլ զբաղված լիներ, ժամանակ էր գտնում և մասնակցում նրանց կազմակերպած միջոցառումներին: Նախանձախնդիր էր հայոց լեզվի հարցում: Երիտասարդներից շատերը ռուսական կրթություն ունեին, լավ չէին տիրապետում մայրենի լեզվին: Այդպիսիները պրեզիդենտի պահանջով ասպիրանտուրա էին ընդունվում միայն հայոց լեզվից քննություն հանձնելու պայմանով:

Ջարմանք էր հարուցում Համբարձումյանի տիտանական աշխատասիրությունը: Աստղագիտության բնագավառում համաշխարհային հեղինակության հասնելը կարծես բե պետք է կլաներ նրա ամբողջ ժամանակը: Դրան եթե հավելենք ԳԱԱ պրեզիդենտի, Բյուրականի աստղադիտարանի տնօրենի, ԽՍՀՄ-ի և արտերկրի բազմաթիվ գիտական, հասարակական կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելը, հասկանալի կդառնա նրա գբաղվածության աստիճանը:

Առանց վարանելու կարող եմ ասել, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի կայացումը և վիթխարի գիտական նվաճումները ուղղակիորեն կապվում են Վիկտոր Համբարձումյանի անվան հետ: Գիտական և գիտակազմակերպական իր գործունեությամբ նա արժանացավ համաշխարհային համբավի, բարձր գնահատականի ու ճանաչման հասցրեց ազգային ակադեմիան: ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների բազմակի դափնեկրի, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի, Հայաստանի Ազգային հերոսի կոչումները մեծանում գիտնականի, գիտության անգուգական կազմակերպչի արժանի գնահատական էին, նրա անուրանալի փաքքի առհավատյան:

Ինձ համար ճակատագրի մեծ պարգև եմ համարում, որ հնարավորություն ունեցա համատեղ աշխատելու, ամեն օր հանդիպելու և մոտիկից շփվելու մեծն Համբարձումյանի հետ:

1993 թ. ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ ընտրվեց նշանավոր պետական-հասարակական գործիչ, գիտակազմակերպական աշխատանքի մեծ փորձ ունեցող Ֆաղդեյ Սաճատի Սարգսյանը: ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով դժվարին իրավիճակ էր ստեղծվել անկախություն ստացած բոլոր հանրապետություններում: Հայաստանում իրավիճակն ավելի ծանր էր՝ ավերիչ երկրաշարժի, դաժան շրջափակման և դարաբաղյան պատերազմի հետևանքով: Հրամայական պահանջ էր դարձել ամեն գնով պահպանել տասնամյակների ընթացքում ձևավորված գիտության հիմնական ուղղությունները, գիտական ներուժը: ԳԱԱ ղեկավարությունը որդեգրեց այդ քաղաքականությունը:

Այդ շրջանում ԳԱԱ-ն ուներ երեք բաժանմունք՝ ֆիզիկա մաթեմատիկական, բնական և հասարակական գիտությունների: Բաժանմունքները համապատասխանաբար ղեկավարում էին Յու. Շուբուրյանը, է. Գաբրիելյանը և ես: Մենք աշխատում էինք ընդհանուր դժվարին պայմաններում, բայց փոխըմբռնման ու հանգործակցության բարենպաստ մթնոլորտում: Թեպետև ակադեմիան անխուսափելի կորուստներ ունեցավ, սակայն Ֆաղդեյ Սարգսյանի ղեկավարությամբ հնարավոր եղավ հիմնականում պահպանել ակադեմիայի գիտական ներուժը: Համագործակցություն ստեղծվեց ➤2

ԱՌԱՆՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ...

➢1 անկախ հանրապետություններից Ռուսաստանի, Ուկրաինայի, արտասահմանյան երկրների գիտական կենտրոնների հետ: Հիմնվեցին գիտական նոր հաստատություններ: Հարկ է նշել, որ ակադեմիայի համակարգում ֆինանսատնտեսական դժվարությունները և ստեղծված սոցիալական լարվածությունը մեղմելուն մեծապես նպաստում էր պրեզիդենտ Ֆ. Սարգսյանի՝ հարցերը խաղաղորեն լուծելու, մարդկանց մշտապես ընդառաջ գնալու վարքագիծը:

2006 թ. պրեզիդենտ ընտրվեց ակադեմիայի համակարգում աշխատանքային մեծ փորձ ունեցող, պետական համալսարանի նախկին ռեկտոր Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը: Գիտական բարձրագույն հաստատության առջև ծառացած էին լուծում պահանջող բազում խնդիրներ: Անհրաժեշտ էր խորացնել ձեռք բերված որոշ հաջողությունները: Հասունացել էր ԽՍՀՄ-ի ժամանակվանից անփոփոխ մնացած ակադեմիայի համակարգը վերակառուցել նոր պահանջների ոգով, կատարել կադրերի երիտասարդացում և այլն:

Կենսաբանական և քիմիական գիտությունների հարակից մասնագիտությունների մի շարք ինստիտուտներ միավորելու միջոցով ստեղծվեցին զորեղ գիտական կենտրոններ: Վերջին վեց տարվա ընթացքում երկու անգամ ընտրություններ կազմակերպելու շնորհիվ ակադեմիկոսների և թղթակից անդամների միջին տարիքը նվազեց: Նույն եղանակով նկատելիորեն երիտասարդացավ ինստիտուտների տնօրենների կազմը: Բարձր հիմքերի վրա դրվեց, աշխուժացավ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի միջոցով երիտասարդ մասնագետներ պատրաստող միջազգային գիտակրթական կենտրոնի գործունեությունը:

Պրեզիդենտի նախաձեռնությամբ կատարվեց մեկ այլ նորամուծություն ևս. արտասահմանյան տարբեր երկրներում բնակվող հայ մասնագետների ներուժը օգտագործելու, ինչպես նաև նրանց՝ հայրենիքի հետ կապելու նպատակով նրանցից արժանավորներն ընտրվեցին ԳԱԱ արտասահմանյան անդամ: Ստեղծվեց սփյուռքահայ բաժին, որը համակարգում է նրանց հետ տարվող աշխատանքները:

Պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանը լավ գիտի ակադեմիայի հոգսերն ու նրա առաջ ծառացած խնդիրները: Գիտական բարձր արդյունքների հասնելու համար նա հետևողականորեն, բայց ծանրախոհ պահվածքով ձգտում է հասնել նրան, որ հնարավոր դառնա նոր տեխնոլոգիայով վերազինել ակադեմիական ինստիտուտները, բարելավել գիտական աշխատանքի պայմանները, աշխատողների սոցիալական վիճակը: Ակնկալում ենք, որ այս և մյուս բոլոր ասպարեզներում կունենանք առաջընթաց:

- Հարգելի պարոն Բարխուդարյան, հոբելյանները ոչ միայն անցած ուղու արժևորումն են, այլ նաև բացթողումների վերհանումը: Ի՞նչ կասեք այդ մասին:

Այստեղ տեղին է օգտագործել խորհրդային տարիներին մշտապես շրջանառվող տերմինը՝ ինքնաքննադատությունը, և արձանագրել, որ ակադեմիան, որպես հզոր ներուժ ունեցող բարձրագույն գիտական հաստատություն, թերացել է իր շատ կարևոր առաքելությունն իրականացնելու գործում: Նա անկախության ամբողջ շրջանում պասիվ է գտնվել և մոտիկից չի անդրադարձել հայ ժողովրդի առջև ծառացած հասարակական-քաղաքական հիմնախնդիրներին:

Կարծում եմ, սխալված չեմ լինի, եթե այդ թերությունը հասցեագրենք ամբողջ հայ մտավորականությանը:

Հարցազրույցը վարեց
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ